ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
0002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 02 62, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.ombuds.am

№ 4-Լ
15 օգոստոսի 2017թ.

ՀՐԱՄԱՆ

ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ ԵՎ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 28-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի աշխատակարգը՝ համաձայն հավելված 1-ի,

2) կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի վարքագծի կանոնները՝ համաձայն հավելված 2-ի:

Ա. ԹԱԹՈՅԱՆ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2017 թվականի հոկտեմբերի 25-ի
N 142 հրամանի

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ

1. Սույն աշխատակարգը (այսուհետ՝ Աշխատակարգ) սահմանում է կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի (այսուհետ՝ Փորձագետ) գործունեության կարգը, նպատակը, Փորձագետին առաջադրվող պահանջները՝ պայմանագրային պարտավորությունները կատարելու ընթացքում:

2. Փորձագետի գործունեության նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին (այսուհետ՝ Պաշտպան) կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակով լիազորությունների իրականացման ընթացքում:

3. Փորձագետն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է սույն Աշխատակարգով, կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի վարքագծի կանոններով, իր հետ կնքված համապատասխան պայմանագրով, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Օրենք) և այլ իրավական ակտերով:

4. Փորձագետին տրվում է կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետ լինելը հավաստող փաստաթուղթ՝ վկայական:

5. Փորձագետն իրականացնում է Պաշտպանին՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ, վերապահված լիազորությունների կատարմանն ուղղված գործառույթները միայն Պաշտպանի գրավոր որոշման հիման վրա՝ այդ որոշմամբ նախատեսված կարգով և ծավալով:

6. Փորձագետն իր պայմանագրային պարտավորությունները կատարում է բացառապես Պաշտպանի կողմից տրված հանձնարարությունների շրջանակում: Պաշտպանի հանձնարարությունների կատարումը կազմակերպում, համակարգում և վերահսկում է Պաշտպանի աշխատակազմի կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողը:

7. Փորձագետը պարտավոր է շահերի բախման առաջանալու յուրաքանչյուր դեպքում անհապաղ այդ մասին տեղեկացնել Պաշտպանին՝ ներկայացնելով շահերի բախմանը վերաբերող կոնկրետ հանգամանքները: Մինչև Պաշտպանից համաձայնություն ստանալը Փորձագետն իրավունք չունի տվյալ հարցի վերաբերյալ գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու:

8. Փորձագետը միաժամանակ չի կարող մասնակցել մոնիթորինգային գործառույթներ իրականացնող այնպիսի հասարակական կամ որևէ այլ խմբի գործունեությանը, որը մոնիթորինգներ է իրականացնում ազատությունից զրկման վայրերում կամ խոշտանգումների կանխարգելման ոլորտում:

9. Փորձագետը միաժամանակ չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Փորձագետն այցերի ընթացքում առաջացող ցանկացած հանգամանքներում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

10. Փորձագետը մասնակցում է Պաշտպանի և կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողի կողմից հրավիրված նիստերին, հանդիպումներին, խորհրդաժողովներին (կոնֆերանսներին), սեմինարներին, գործնական պարապմունքներին, քննարկումներին և այլ միջոցառումներին:

11. Փորձագետը մասնակցում է ազատությունից զրկման վայրեր պարբերական այցերի նախապատրաստման աշխատանքներին:

12. Փորձագետը տեղեկացվում է ազատությունից զրկման վայրեր պարբերական այցերին մասնակցելու վերաբերյալ այցից առնվազն երեք օր առաջ, իսկ ըստ անհրաժեշտության այցերին մասնակցելու վերաբերյալ՝ անմիջապես:

13. Ազատությունից զրկման վայրեր նախատեսվող այցերին և Պաշտպանի ու կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողի կողմից հրավիրված նիստերին, հանդիպումներին, խորհրդաժողովներին (կոնֆերանսներին), սեմինարներին, գործնական պարապմունքներին, քննարկումներին և այլ միջոցառումներին մասնակցելու անհնարինության դեպքում Փորձագետն իր բացակայության և դրա պատճառների վերաբերյալ նախապես ծանուցում է կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողին:

14. Այցերի համար Փորձագետն ապահովվում է անհրաժեշտ աշխատանքային գործիքներով (հարցաթերթիկներով, չափիչ, ինչպես նաև տեսանկարահանող, լուսանկարահանող սարքերով և այլ միջոցներով)՝ իրազեկվելով դրանց շահագործման կանոններին: Փորձագետը կրում է նշված գործիքների պահպանման պարտականությունը:

15. Փորձագետն այցերին պետք է ներկայանա զուսպ և ազատությունից զրկման վայրում աշխատանքի համար որևէ անհարմարություն կամ խոչընդոտ բացառող հագուստով, առանց ուշադրություն հրավիրող իրերի:

16. Այցի ընթացքում Փորձագետը կատարում է այցն իրականացնող խմբի ղեկավարի հանձնարարությունները, ով որոշվում է այցից առաջ Պաշտպանի կամ կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողի կողմից:

17. Փորձագետի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելու կամ այցի ընթացքում ի հայտ եկած հրատապ այլ հարցերի վերաբերյալ Փորձագետը անհապաղ հայտնում է խմբի ղեկավարին, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողին և Պաշտպանին:

18. Ազատությունից զրկման վայրերում պահվող անձանց հետ առանձնազրույցի ընթացքում Փորձագետը պարտավոր է ներկայանալ ազատությունից զրկված անձին, ներկայացնել Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի, ինչպես նաև իր լիազորությունները:

19. Այցից անմիջապես հետո ձեռք բերված տեղեկությունը, ինչպես նաև դրանց վերաբերող իր մասնագիտական կարծիքը Փորձագետը հայտնում է այցն իրականացրած խմբի ղեկավարին:

20. Այցից հետո Փորձագետը մասնակցում է դրա արդյունքների ամփոփմանը՝ հանձնարարված ժամկետում ներկայացնելով մասնագիտական վերլուծական տեղեկանք:

21. Նշված տեղեկանքը կազմելիս Փորձագետը պետք է հիմնվի ստույգ փաստերի վրա, հստակ սահմանազատի փաստերի և տեղեկությունների շարադրանքը կարծիքներից, վերլուծություններից ու մեկնաբանություններից՝ չկոծկելով և չխեղաթյուրելով փաստերը:

22. Փորձագետը Պաշտպանի կամ կանխարգելման ազգային մեխանիզմի իրականացման համակարգողի հանձնարարությամբ մասնակցում է Պաշտպանի՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության վերաբերյալ տարեկան զեկույցի, ինչպես նաև կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության ոլորտին առնչվող արտահերթ զեկույցների կամ այլ անհրաժեշտ նյութերի կազմման աշխատանքներին:

23. Փորձագետը, ինչպես պայմանագրային պարտավորությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրանցից դուրս, իրավունք չունի հրապարակել (զանգվածային լրատվության միջոցներով, սոցիալական կայքերով կամ որևէ այլ եղանակով) կանխարգելման ազգային մեխանիզմի գործունեության շրջանակում իրեն հայտնի դարձած ցանկացած տեղեկություն, այդ թվում այնպիսին, որը վերաբերում է մարդու անձնական կամ ընտանեկան կյանքին, պարունակում է պետական, ծառայողական կամ օրենքով պահպանվող այլ գաղտնիք՝ բացառությամբ Պաշտպանի կողմից տրված գրավոր թույլտվության և Պաշտպանի սահմանած ծավալով: Սույն պարտականությունը շարունակում է գործել նաև Փորձագետի պայմանագրային պարտավորությունների դադարեցումից հետո:

24. Փորձագետի լիազորությունները դադարեցվում են նրա հետ կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով:

25. Սույն Աշխատակարգը Փորձագետի կողմից խախտելը կարող է հիմք հանդիսանալ իր հետ կնքված պայմանագրի միակողմ վաղաժամկետ լուծման համար:

26. Սույն Կարգում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվում են Պաշտպանի հրամանով:

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2017 թվականի դեկտեմբերի 15-ի
N 4-Լ հրամանի

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ

1. Սույն կանոններով սահմանվում են կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետի (այսուհետ՝ Փորձագետ) վարքագծի կանոնները (այսուհետ՝ Վարքագծի կանոններ)՝ ինչպես պայմանագրային պարտավորությունները կատարելու ընթացքում, այնպես էլ պայմանագրային պարտավորություններից դուրս:

2. Փորձագետի Վարքագծի կանոնները բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա հիմնված՝ վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են, որոնց նպատակն է ուղղորդել Փորձագետին իր վարվելակերպում:

3. Վարքագծի կանոնները պարտադիր են բոլոր փորձագետների համար:

4. Փորձագետը գործում է մարդասիրության, օրինականության, արդարության, վստահության, գաղտնիության, չվնասելու, փոխադարձ հարգանքի և անկողմնակալության սկզբունքների հիման վրա:

5. Փորձագետի գործունեությունը պետք է ուղղված լինի ՀՀ Սահմանադրությամբ և այլ իրավական ակտերով հետապնդվող նպատակներին, և դրանց հասնելու միջոցները պետք է լինեն անհրաժեշտ, պիտանի և համաչափ:

6. Փորձագետը պարտավոր է՝

1) հարգել ՀՀ պետական խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) և պետական լեզուն,

2) զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել Պաշտպանի աշխատակազմի աշխատանքները կամ վարկաբեկել և հեղինակազրկել վերջինիս կամ կանխարգելման ազգային մեխանիզմի վարկանիշը,

3) հարգել մարդու իրավունքներն ու արժանապատվությունը՝ անկախ նրա սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից,

4) լինել անաչառ, զուսպ և օրինակելի,

5) իրեն դրսևորել որպես բարձր բարոյական հատկանիշներ ունեցող անձնավորություն,

6) ցուցաբերել քաղաքական զսպվածություն,

7) չօգտագործել պայմանագրային պարտավորությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը՝ անձնական շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով,

8) բացառել անձնական որևէ հետաքրքրություն կոնկրետ անձի և դեպքի վերաբերյալ,

9) ստեղծված ոչ ստանդարտ կամ արտակարգ իրավիճակներում չցուցաբերել երկչոտություն կամ անհարկի զգացմունքայնություն, լինել հավասարակշռված,

10) լինել քաղաքավարի, կարգապահ, ճշտախոս, հետևողական, հանրային շահը բարձր դասել անձնականից,

11) խուսափել գնահատականներից և խոստումներից, գիտակցել իր խոսքի արժեքն ու կարևորությունը, տրված խոստման կատարման անհնարինության դեպքում առաջացող հնարավոր բացասական հետևանքները:

7. Սույն Վարքագծի կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը:

8. Սույն Վարքագծի կանոնները Փորձագետի կողմից խախտելը կարող են հիմք հանդիսանալ իր հետ կնքված պայմանագրի միակողմ վաղաժամկետ լուծման համար:

9. Սույն Վարքագծի կանոններում փոփոխություններ և լրացումներ կատարվում են Պաշտպանի հրամանով: